ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԱՐՈՆ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ներսիսյան.

Քաղաքացի Ալլա Մանուկյանի կողմից բարձրացված հարցը բազմիցս ուսումնասիրվել է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համապատասխան մասնագետների կողմից: Արդյունքում, համաձայն «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի կողմից տրամադրված տեղեկատվության՝ Ալլա Մանուկյանը հաշվառված է եղել Երևանի Կոնդ թաղամասի Ռուսթավելու փողոցի թիվ 20 հասցեում: Կոնդ թաղամասում գտնվող գույքերի նկատմամբ բացառիկ՝ գերակա հանրային շահ է ճանաչվել ՀՀ կառավարության 2007 թվականի մարտի 1-ի թիվ 347-Ն և 2009 թվականի փետրվարի 19-ի թիվ 168-Ն որոշումներով: Վերոնշյալ հասցեում գտնվող յոթ գույքերից հինգը (այդ թվում՝ իրեն պատկանող գույքը) չի ընդգրկվել իրացվող գույքերի ցանկում, քանի որ այդ գույքերը կառավարության որոշումներն ընդունելու պահին արդեն իսկ իրացված են եղել:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ